

ՖԵԼԻՔՍ ՏԵՐ-ՍԱՐՏԻՐՈՍՈՎ
1939 - 2014



ՈՒՍՈՒՑՉԻՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Տաղանդավոր հնագետ, խորագետ գիտնական, անձնվեր դասախոս եւ բա-
րեկիրք մտավորական Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը ծնվել է 1939 թ. Թբիլիսիում:
Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայում, ուր 1961 թ. ընդունվել է Մ.
Լոմոնոսովի անվան Պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի
հնագիտության բաժինը եւ գերագանց ավարտել 1966 թ.: Նամալսարանն ավար-
տելուց անմիջապես հետո նա ընտանիքի հետ տեղափոխվել է Ղայաստան եւ
աշխատանքի անցել ՂՍՄ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտու-
տում՝ որդես կրտսեր գիտաշխատող, իսկ 1988-ից՝ որդես ավագ գիտաշխա-
տող: Թեկնածուական ատենախոսությունը դաշտդանել է Երեւանում 1984 թ.,
«Նեյլենիստական Ղայաստանի խեցեղենը որդես դատմական աղբյուր» թե-
մայով:

Ֆ. Տեր-Մարտիրոսովը մասնակցել է Ղայաստանի նշանակալի անտիկ հու-
շարձանների՝ Գառնիի, Արմավիրի, Արտաշատի հնագիտական թեղումներին
եւ ուսումնասիրություններին: 1977-1984 թթ. ղեկավարել է անտիկ Շիրակավա-
նի թեղումները, իսկ 1985-1989 թթ.՝ Երերույքի, Երվանդաշատի եւ Անուշավա-
նի արշավախմբերը: Եւ Ղայաստանի առաջին միջազգային հնագիտական
արշավախմբերի կազմակերպիչներից եւ ղեկավարներից մեկն է: Այսպես, 1998-
2006 թթ. ղեկավարել է Բենիամինի՝ դատմական Դրասխանակերտի հայ-ֆրան-
սիական համատեղ արշավախումբը, իսկ 1998-2008 թթ. նրա ղեկավարությամբ
գործել է Էրեբունիի հնագիտական արշավախումբը՝ վերջին տարիներին գործե-
լով որդես հայ-ֆրանսիական եւ հայ-ամերիկյան արշավախումբ: Երա ղեկա-
վարած վերջին հնագիտական արշավախումբը Երվանդաշատի դալատական
համալիրի ուսումնասիրությունն էր, որ իրականացվեց 2005-2014 թթ.: Ֆ. Տեր-
Մարտիրոսովը երեք մենագրությունների եւ 120 հոդվածների հեղինակ է, մաս-
նակցել է մոտ 70 հանրադասական եւ միջազգային գիտաժողովների, աշխատել
է որդես Եւրոպայի խորհրդի Ղայաստանի մշակութային հարցերով փորձագետ:

1983 թ. Երեւանի գեղարվեստի ակադեմիայում (նախկին գեղարվեստաթա-
տերական ինստիտուտ) Ղայաստանում առաջին անգամ բացվեց արվեստաբա-
նական բաժինը, որտեղ հենց առաջին տարվանից Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը
հրավիրվեց դասավանդելու «Անտիկ դասական արվեստի դատմություն» ա-
ռարկան՝ նաեւ իր համար նշանավորելով դասախոսական աշխատանքի դերյու-
տը: Չնայած իր հիմնական լեզուն ռուսերենն էր, եւ այդ տարիներին որեւէ
արգելք չկար ռուսերեն դասավանդելու բուհերում, այնուամենայնիվ, նա որո-
շում կայացրեց դասախոսություններն անցկացնել հայերեն եւ մեծագույն կամ-
քի ու ճիգերի գնով կարողացավ հաղթահարել լեզվական արգելքները:

Ակադեմիան մեծ գիտնականին շնորհել է բուհի տասնավոր տրոֆեոսի կոչում: 1996 թ., երբ ԵՊՆ տասնամյայան ֆակուլտետում բացվեց Նայ արվեստի տասնամյայան եւ տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի անբիոնը, նա զուգահեռաբար հրավիրվել է որդես դոցենտ, ուր դասավանդել է մինչեւ 2013-2014 ուստարին՝ արժանանալով մի շարք շնորհակալագրերի եւ տարգելատրվելով ԵՊՆ ոսկե մեդալով (2014 թ.):

Տարեգրքում ներկայացվող հոդվածը Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի գրեթե վերջին գիտական աշխատանքն է, որ տղագրում ենք ամենայն խնամոք եւ իր վաստակի ու հիշատակի հանդեղ մեծ խոնարհությամբ:

ՆԱՉԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ